ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 33

04/09/2017

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-0353-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ-ի մասին օրենքի 18-րդ հոդվածի , Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի և ՀՀ հողային օրենսգիրքի պահանջներով և հիմք ընդունելով 02.09.2017թ. համայնքային սեփականություն հանդիսացող 353-003 կադաստրային ծածկագրով 15.61 հա մակերեսով հողամասի աճուրդ-վաճառքի չկայանալը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0353-0003 կադաստրային ծածկագրով 15.61 հա մակերեսով էներգետիկայի գործառնական նշանակության հողը օտարել երկրորդ աճուրդ-վաճառքի միջոցով: Աճուրդում հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 50% չափով՝ 15.61x(2220000x50%)=17327100 /տասնյոթ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ , նախավճարը սահմանել մեկնարկային գնի 5% չափը՝ 866355 /ութ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ , աճուրդում նվազագույն քայլի չափը նույնպես սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝866355 /ութ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ , աճուրդի մասնակցության մուտքավճար սահմանել 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:

2. Վերոնշված արժեքները ընդունել հիմք և առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով

սահմանված կարգով կազմակերպել երկրորդ աճուրդ վաճառքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ
6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**